թուին, Շահ-Աբբասի ձեռքով։

Գիւղի կրծքից բղխում է մի աղբիւր. դա հարուստ է սառնորակ ջրով, որ թափւում է իր առաջ գտնւող մեծ աւազանը և ապա այդտեղից վազելով դէպի արտերը՝ ոռոգում է։

Հողատիրութեան տեսակը կալւածատիրական է. պատկանում է Աբբաս Հուսէյն-Ղուլի խանին. գիւղացիները հողազուրկ են. նրանք մշակում են աղալի հողերը և բերքի $^1/_3$ մասը տալիս են նրան, իսկ պետական հարկ վճարում են 25 թուման։

Գիւղն ունի մի մատուռ՝ Ս. Աստուածածին. դպրոց չունի։ Այս տարւայ հունձքի նւազութեան պատճառով գիւղացիութիւնն ենթարկւեց սովի, որին զոհ գնացին վեց հոգի։

№	ԿԱՐԳԵՐ	Շունչ
1	Աղքատ	20
2	Չունևոր	20
3	Միջակ	28
4	Ունևոր	7
5	Հարուստ	—
	Ընդամենը	75

ԱԶՆԱՒՈՒԼ

Բոլորանից դէպի արևելք, քառորդ ֆարսախ հեռու, սարերի փէշին, մի ընդարձակ դաշտի վրայ փռւած է Ազնաւուլը. դա մի գեղեցիկ գիւղ է, ուռենիների և բարդիների տնկարաններով պճնազարդւած։ Գիւղի հիմք գցողները գաղթել են Քեաբանդ և Աղկէօլ գիւղերից՝ 150 տարի առաջ. նրանք պարապում են գլխաւորապէս երկրագործութեամբ։ Այժմ գիւղն ունի 30 տուն՝ 278 շնչով, որից 135-ը արական է և 143-ը իգական։

Գիւղի հիւսիս-արևելեան կողմից բղխում է մի քահրիզ, որ շնորհիւ իր հարուստ ջրի կազմում է մի փոքրիկ առու, որը ոլորապտոյտ հոսելով՝ ջրում է իր ափերի մօտ ընկած ուռենիների և կաղամախիների տնկարանները և ապա այդտեղից վազում է մի գեղեցիկ ձոր, որի երկարութեամբ աբ-